

«.....», այսուհետ՝ «Պրինցիպալ», ի դեմս տնօրեն, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Գործակալ», ի դեմս տնօրեն Արամ Ազատյանի, որը գործում է ընկերության Կանոնադրության և ՎՃԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊՐՈՑԵՍԻՆԳ ԵՎ ՔԼԻՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ № 2 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒ ԴՐԱՍԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ № 5 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ հիման վրա, մյուս կողմից, հետագա համատեղ և առանձին հիշատակման դեպքում անվանվելով «Կողմեր» և «Կողմ», կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

1. ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԻՐԱՈՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

- 1.1. **Հաճախորդ** - ֆիզիկական անձ, որն օգտվում է **Պրինցիպալի** կողմից մատուցվող ծառայություններից և այդ նպատակով կատարում է վճարում, որը գրանցվում է նաև Պրինցիպալի համապատասխան համակարգում և ունի իր իդենտիֆիկացիոն համարը:
- 1.2. **Մատուցվող ծառայություններ - Պրինցիպալին** պատկանող կայքի միջոցով **Հաճախորդին** մատուցվող ծառայություններ:
- 1.3. **Իդենտիֆիկացիոն համար - Պրինցիպալի** համակարգում **Հաճախորդի** գրանցման իդենտիֆիկացիոն համար:
- 1.4. **Վճար** – նախնական կանխիկ վճար, որը վճարվում է **Պրինցիպալին** Տերմինալի միջոցով Հաճախորդին մատուցվող ծառայությունների դիմաց:
- 1.5. **Տերմինալ - Գործակալին** պատկանող սարքավորման ինքնուրույն միավոր /մասնագիտացված դրամարկուսյին սարքավորում/ նախատեսված ավտոմատ ինքնասպասարկման համար, որի միջոցով կատարվում է վճարների ընդունում:
- 1.6. **Վճարող** – Հաճախորդ կամ Հաճախորդի համար վճարում կատարող:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 2.1. Սույն **Պայմանագրի** պայմաններին համապատասխան **Գործակալը** պարտավորվում է **Պրինցիպալի** անունից և համաձայնությամբ **Պրինցիպալի** օգտին Վճարողներից Վճարների ընդունման և փոխանցման ծառայություններ մատուցել, իսկ **Պրինցիպալը** պարտավորվում է վճարել **Գործակալին** սույն **Պայմանագրով** նախատեսված վարձատրությունը /վճարը/:
- 2.2. **Գործակալը** սույն **Պայմանագրի** 2.1 կետում նշված ծառայությունը **Պրինցիպալի** համար իրականացնում է իր և/կամ իր գործակալներին պատկանող Տերմինալների միջոցով:
- 2.3 Սույն **Պայմանագրի** 2.1 կետում նշված ծառայությունները իրականացնում են **Գործակալին** պատկանող համապատասխան ծրագրային ապահովման միջոցով:
- 2.4. **Կողմերը** հայտնում և հավաստիացնում են, որ նախքան սույն **Պայմանագիրը** կնքելը նրանք պատշաճ տեղեկացված և իրազեկված են եղել սույն **Պայմանագրում** նշված **Տերմինալների** նպատակային նշանակության, աշխատանքային կարգի, շահագործման ընդհանուր կանոնների և այլ անհրաժեշտ տեղեկատվության հետ, որի վերաբերյալ առարկություն չունեն:

- 2.5. **Կողմերը** հաստատում են, որ **Կողմերի** համապատասխան մասնագետները, կապված ծրագրային ապահովման հետ, կատարել են անհրաժեշտ գործողություններ, որը հնարավորություն կտա փոխհամագործակցության ընթացքում ապահովել ծրագրային ապահովման անխափան աշխատանք:
- 2.6. Ընդունված **Վճարների** մասին տեղեկատվության փոխանցումը կատարվում է էլեկտրոնային ձևով **Կողմերի** համաձայնեցված ֆորմատներով և **Կողմերի** համաձայնեցված ցանցերի և կապի միջոցների օգտագործումով:

3. ՊՐԻՆՑԻՊԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պրինցիպալը պարտավորվում է՝

- 3.1. Սույն **Պայմանագրի** ստորագրման օրվանից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում **Գործակալին** տրամադրել իր համակարգից հաճախորդների իդենտիֆիկացիոն համարների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորություն:
- 3.2. Սույն **Պայմանագրի** ստորագրման օրվանից, երեք աշխատանքային օրվա ընթացքում **Գործակալի** ծրագրային համակարգին միանալու համար **Գործակալին** միանվագ վճարել 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
- 3.3. Ընդունված վճարների վերաբերյալ **Գործակալի** կողմից ուղարկված հաշվետվությունը ստանալուց հետո մեկ /1/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել իր առարկությունները, եթե այդպիսիք կան: Մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում հաշվետվությունը համարվում է արժանահավատ, ճիշտ, հավաստի և ընդունված:
- 3.4. Վճարման մասին տվյալները ընդունելի գիտություն՝ օգտագործելով Գործակալի ծրագրային ապահովվածությունը:
- 3.5. Պատշաճ կատարել սույն **Պայմանագրով** ստանձնած իր պարտավորությունները:
- 3.6. **Գործակալի** ծրագրային ապահովման համակարգում փոփոխություններ չկատարել, ինչպես նաև ապահովել երրորդ անձանց համակարգ մուտք գործելու անհնարինությունը:
- 3.7. **Գործակալին** ցուցաբերել տեղեկատվական աջակցություն՝ էլեկտրոնային տարբերակով կամ հեռախոսի միջոցով:
- 3.8. Սույն **Պայմանագրով** սահմանված ժամկետում, չափով և կարգով վճարել **Գործակալին** վերջինիս հասանելիք վճարման ենթակա գումարները՝ վարձատրությունը:
- 3.9. Իր ինտերնետային կայքում և իր համակարգում գրանցված և հետագայում գրանցվող հաճախորդներին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնել /իրազեկել/ **Գործակալի** գործունեության մասին և Տերմինալներով վճարումների իրականացման հնարավորության մասին:
- 3.10. **Պրինցիպալի** հաշվի վրա **Գործակալի** կողմից փաստացի վճարման ենթակա գումարից ավել գումարի սխալ փոխանցման դեպքում **Պրինցիպալը Գործակալի** գրավոր պահանջի կամ ինքնուրույն հայտնաբերման դեպքում երկու բանկային օրվա ընթացքում պարտավոր է վերադարձնել փոխանցված ավելորդ գումարը **Գործակալին**:
- 3.11. Փոխհատուցել /վերադարձնել/ Հաճախորդին չմատուցված կամ անկախ պատճառներից և հանգամանքներից ոչ պատշաճ մատուցված ծառայությունների դիմաց Վճարողի կողմից կատարված վճարը:
- 3.12. Սույն **Պայմանագրի** գործողության ընթացքում **Պրինցիպալի** կողմից այլ կազմակերպությունների /իրավաբանական անձանց հետ/ և/կամ անհատ ձեռնարկատերերի հետ սույն **Պայմանագրի** առարկան կազմող նույնաբովանդակ պայմանագրեր կնքելու դեպքում սույն **Պայմանագրով** սահմանված **Գործակալի** վարձատրության չափը չի կարող պակաս լինել, քան այլ կազմակերպություններին /իրավաբանական անձանց/ և/կամ անհատ ձեռնարկատերերին վճարվող վարձատրության չափից:

Պրինցիպալն իրավունք ունի՝

- 3.13. Պահանջել **Գործակալից** պատշաճ կատարելու իր կողմից ստանձնած պարտավորությունները:
- 3.14. Ստանալ հաշվետվություն իր հաճախորդների վերաբերյալ **Գործակալի** միջոցով ընդունված վճարների վերաբերյալ:
- 3.15. Պահանջել **Գործակալից** սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում կատարել իրեն փոխանցման ենթակա գումարների վճարումը:

4. ԳՈՐԾԱԿԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործակալը պարտավորվում է՝

- 4.1. Պատշաճ կատարել սույն **Պայմանագրով** ստանձնած պարտավորությունները:
- 4.2. Սույն **Պայմանագրով** սահմանված կարգով փոխանցել **Պրինցիպալին** հասանելիք գումարները:
- 4.3. Վճարը ընդունելու դեպքում Վճարողին տալ Վճարումը հաստատող փաստաթուղթ/անդորրագիր/:
- 4.4. **Պրինցիպալի** օգտին ընդունված վճարումները փոխանցել **Պրինցիպալին** ամիսը մեկ անգամ: Յուրաքանչյուր ամսվա համար կողմերը կազմում են փոխանցված գումարների վերաբերյալ համապատասխան փոխհաշվարկների ակտ:
- 4.5. Մերժել Վճարողին Վճարների ընդունման և կատարման հարցում հետևյալ դեպքերում՝
 - 4.5.1. Ինտերնետ կապի բացակայության դեպքում,
 - 4.5.2. **Պրինցիպալի** կողմից Իդենտիֆիկացիոն համարների բազան ժամանակին չտրամադրելու դեպքում:
- 4.6. **Պրինցիպալին** ամեն օր էլեկտրոնային ձևով հաշվետվություն ներկայացնել էլեկտրոնային հասցեով ընդունված Վճարների վերաբերյալ, հաջորդ աշխատանքային օրվա մինչև ժամը 15:00-ն: Հաշվետվությունը պետք է պարունակի Վճարների գումարի չափը և Վճարողների իդենտիֆիկացիոն համարները:

Գործակալն իրավունք ունի՝

- 4.7. **Պրինցիպալից** ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և աջակցություն:
- 4.8. Սույն **Պայմանագրով** իր իրավունքներն ու պարտավորությունները փոխանցել երրորդ անձանց:
- 4.9. Ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն **Պայմանագիրը**, այդ մասին երեսուն օր առաջ գրավոր ծանուցելով **Պրինցիպալին**:
- 4.10. Չփոխանցել **Պրինցիպալին** փոխանցման ենթակա գումարները կամ այդ գումարների հաշվին կատարել հաշվանցում, եթե **Պրինցիպալը Գործակալի** հանդեպ ունի չմարված դրամական պարտավորություններ, այդ թվում տուգանքների և տույժերի գծով:
- 4.11. Պահանջել **Պրինցիպալից** պատշաճ կատարել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները:

5. ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 5.1. Սույն Պայմանագրով հաշվետու ժամանակահատվածի ընթացքում **Պրինցիպալի** կողմից **Գործակալին** վճարվող վարձատրության չափը սահմանվում է ընդունված վճարումների հանրագումարի 4,5 /չորս ամբողջ հինգ/ տոկոսի չափով:
- 5.2. Հաշվետու ժամանակահատված է համարվում յուրաքանչյուր ամսվա առաջին օրվանից մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներառյալ:
- 5.3. **Գործակալը** **Պրինցիպալի** օգտին, հաշվետու ժամանակահատվածում ընդունած վճարների գումարը փոխանցում է **Պրինցիպալի** հաշվի համարի վրա ամիսը մեկ անգամ՝ փոխհաշվարկների ստորագրման ակտը ստորագրելուց հետո երեք բանկային օրվա ընթացքում:
- 5.4. Հաշվետու ամսվան հաջորդող ամսվա հինգից ոչ ոչ **Կողմերը** նախորդ ամսվա փոխհաշվարկների ստուգում են իրականացնում և ստուգման արդյունքներով ստորագրում են փոխհաշվարկների ստուգման Ակտ:
- 5.5. Ստուգումների Ակտի ստորագրման օրվանից և **Գործակալից** վճարման հաշիվը ստանալուց հետո երեք բանկային օրվա ընթացքում **Պրինցիպալը** կատարում է **Գործակալի** վարձատրության վճարում:
- 5.6. Սույն **Պայմանագրի** բոլոր հաշվարկները կատարվում են ՀՀ դրամով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 6.1. Սույն **Պայմանագրով** պարտավորությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ ձևով կատարման համար **Կողմերը** պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

- 7.1. **Կողմերը** պարտավորվում են սույն Պայմանագրի գործողության ընթացքում ստացած տեղեկությունները չհրապարակել երրորդ անձանց, բացառությամբ այն անձանց, որոնք լիազորված են **Կողմերից** յուրաքանչյուրի անունից ստանալու և փոխանցելու սույն **Պայմանագրի** պարտավորությունների կատարման հետ կապված տեղեկատվություն:
- 7.2. Սույն **Պայմանագրում**, որպես գաղտնի տեղեկատվություն ընկալվում են հանրությանը չհրապարակվող տեղեկությունները, որոնց հրապարակումը կարող է բերել վնասների առաջացման և/կամ ազդել ցանկացած **Կողմի** գործարար համբավի վրա:
- 7.3. 7.2 կետում նշված տեղեկատվությունը կարող է բացահայտվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
- 7.4. Սույն **Պայմանագրի** լուծման դեպքում **Կողմերը** պարտավորվում են չհրապարակել և չօգտագործել իր և/կամ երրորդ անձանց շահերի օգտին 7.2 կետում նշված տեղեկատվությունը սույն **Պայմանագրի** գործունեությունը լուծելու պահից 3(երեք) տարվա ընթացքում:

8. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

- 8.1. **Կողմերն** ազատվում են իրենց պարտավորությունները մասամբ կամ ամբողջությամբ չկատարելու պատասխանատվությունից, եթե այն հանդիսացել է անհաղթահարելի իրավիճակների հետևանք՝ հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ և **Կողմերի** հսկողությունից դուրս

գտնվող այլ իրավիճակներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից որոշումների, վճիռների, և այլ ակտերի ընդունման դեպքում, որոնք խոչընդոտում են **Կողմերին** սույն **Պայմանագրով** իրենց պարտավորությունների կատարմանը:

8.2. Այն **Կողմը**, որի համար ֆորս-մաժորային իրավիճակների հետևանքով անհնարին պայմաններ են ստեղծվել կատարելու սույն **Պայմանագրի** պարտավորությունները, պարտավոր է անհապաղ մյուս կողմին ներկայացնել Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից տրված հավաստում:

8.3. Եթե ֆորս-մաժորային իրավիճակների հետևանքով սույն **Պայմանագրի** պարտավորությունների չկատարումը երկու ամսից ավելի է երկարաձգվում, ապա **Կողմերից** յուրաքանչյուրն իրավունք ունի նախաձեռնելու ժամկետից շուտ լուծելու սույն **Պայմանագիրը**:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9.1. **Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է մինչևթ.:**

9.2. Եթե սույն **Պայմանագրի** ժամկետը լրանալուց երեսուց օրացուցային օր առաջ **Կողմերից** ոչ մեկը չի հայտարարում **Պայմանագիրը** դադարեցնելու իր մտադրության մասին, ապա սույն **Պայմանագրի** գործողության ժամկետը ավտոմատ երկարաձգվում է ևս մեկ տարի ժամկետով:

9.3. Ցանկացած դեպքում **Պայմանագրի** գործողությունը չի դադարում, մինչև **Կողմերի** միջև փոխհաշվարկների և դրամական պարտավորությունների ամբողջովին կատարելը:

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

10.1. Սույն **Պայմանագրից** ծագող կամ դրա հետ կապված բոլոր վեճերը, տարաձայնությունները կամ պահանջները և որոնք չեն կարգավորվում բանակցությունների և խորհրդատվությունների ուղիով, այդ թվում նաև դրա կատարմանը, խախտմանը, դադարեցմանը կամ անօրինակակամությանը վերաբերող հարցերը, ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Սույն **Պայմանագրով Պրինցիպալի** իրավունքներն ու պարտավորությունները երրորդ անձանց փոխանցել չի թույլատրվում:

11.2. **Պայմանագիրը** կարգավորվում և պարզաբանվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

11.3. Հասցեների և/կամ բանկային վավերապայմանների փոխվելու դեպքում **Կողմերից** յուրաքանչյուրը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել մյուս կողմին համապատասխան փոփոխությունների օրվանից ոչ ուշ, քան 10 (տասը) օրացուցային օր առաջ:

11.4. Սույն **Պայմանագրի** բոլոր փոփոխություններն ու լրացումները գործում են միայն այն դեպքում, եթե դրանք կատարվել են միայն գրավոր ձևով և ստորագրվել են **Կողմերի** լիազորված ներկայացուցիչների կողմից:

11.5. **Պայմանագիրը** կազմված է հայերեն լեզվով երկու հավասարազոր օրինակներից, միևնույն իրավաբանական ուժով, **Կողմերից** յուրաքանչյուրի համար մեկական օրինակ:

